ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2015 թվականի N 37

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 14-Ի ԹԻՎ 38 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Իրավական ակտերի մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի և 5-րդ մասի դրույթներով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին

որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան գյուղական համայնքի ավագանու 2012 թվականի օգոստոսի 14-ի <Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը Ախուրյան համայնքի թիվ 1 վարչական շենքից տարածք անհատույց օգտագործման տրամադրելու մասին> թիվ 38 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը
Որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի գյուղական համայնքի սեփականություն հանդիսացող, Գյումրու խճուղի 42 հասցեում գտնվող թիվ 1 վարչական շենքի նկուղային մասից 53.76 քառակուսի մետր, 1-ին հարկից 482,42 քառակուսի մետր, 2-րդ հարկից 254,23 քառակուսի մետր մակերեսով տարածքներ անհատույց, անժամկետ օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը՝ որպես ինտեգրված սոցիալական ծառայությունների կենտրոն օգտագործելու նպատակով:
2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանու անդամներ՝	կողմ 8 (ութ)	դեմ 0 (զրո)	ձեռնպահ 0 (զրո)
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գևորգյան			
Արա Մուշեղյան			
Կարեն Սերգոյան			
Սամվել Հովիկյան			
Ներսես Մաթևոսյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Մխիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ
14 հուլիսի 2015 թվական
գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2015 թվականի N 38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՆԱԿԱՐԱՆՅԻՆ ՖՈՆԴԻՑ ՄԵԿ ԲՆԱԿԱՐԱՆ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՆՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով Անահիտ Գեղամի Բարսեղյանի դիմումը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին

որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի սեփականություն հանդիսացող Նոր Ախուրյան շենք 9ա, թիվ 5 /նոր հասցեն՝ Յու.Ղամբարյան փողոց, 2-րդ անցում շենք 9ա, թիվ 5/ ընդամենը 58,2 քառակուսի մետր բնակարանը ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով նվիրատվության կարգով տալ Անահիտ Գեղամի Վարդանյանի 3 /երեք/ անձից բաղկացած ընտանիքին:
2. Նկատի ունենալով համայնքի բյուջեում համապատասխան դրամական միջոցների բացակայությունը բնակարանի նվիրատվության հետ կապված ծախսերի կատարումը վերապահել վարձակալին:

Ավագանու անդամներ՝	կողմ 8 (ութ)	դեմ 0 (զրո)	ձեռնպահ 0 (զրո)
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գևորգյան			
Արա Մուշեղյան			
Կարեն Մերգոյան			
Սամվել Հովիկյան			
Ներսես Մաթևոսյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Մխիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

14 հուլիսի 2015 թվական

գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2015 թվականի N 39

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄՈՒՄԱՏՈՒ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով և հիմք ընդունելով դիմումները, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2015թվականի բյուջեի <ընտանիքի անդամներ և զավակներ> ծրագրի 10-րդ բաժնի, 4-րդ խմբի, 1-ին դասի 51 ծրագրի 4729 հոդվածից հոդվածից ներքոհիշյալ անապահով ընտանիքներին տրամադրել միանվագ դրամական նպաստ ընդհանուր գումարով 70000 /յոթանասուն/ դրամ.

1.Ավետիսյան Լենա -25000դրամ
2.Տոնոյան Վաչագան-25000դրամ
3.Հովհաննիսյան Մամիկոն –20000դրամ

Ավագանու անդամներ՝	կողմ 8 (ութ)	դեմ 0 (զրո)	ձեռնպահ 0(զրո)
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գևորգյան			
Արա Մուշեղյան			
Կարեն Սերգոյան			
Սամվել Հովիկյան			
Ներսես Մաթևոսյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Մխիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

14 հուլիսի 2015 թվական
գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2015 թվականի N 40

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 24 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և 5-րդ մասի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքի ավագանու 2015թվականի հունիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2014 թվականի դեկտեմբերի 9-ի թիվ 53 որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 24 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները

1. Որոշման հավելվածի

1) «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ-ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի 4-րդ տողի գործավար՝ պաշտոնային դրույքաչափը՝ «80000» դրամ թիվը փոխարինել «85000» դրամ թվով, տոկոսաչափը համայնքի ղեկավարի աշխատավարձի նկատմամբ՝ «30.23» թիվը փոխարինել «32.13» թվով:

2)«ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԵՔԻԱԹ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի 3-րդ տողի գործավար՝ պաշտոնային դրույքաչափը՝ «80000» դրամ թիվը փոխարինել «85000» դրամ թվով, տոկոսաչափը համայնքի ղեկավարի աշխատավարձի նկատմամբ՝ «30.23» թիվը փոխարինել «32.13» թվով:

3) «ԱԽՈՒՐՅԱՆԻ ԼԵՈՆԱՐԴՈ ԳՄՅՈՒՐԻ ԱՆՎԱՆ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի 3-րդ տողի գործավար՝ պաշտոնային

դրույքաչափը՝ «80000» դրամ թիվը փոխարինել «85000» դրամ թվով, տոկոսաչափը համայնքի ղեկավարի աշխատավարձի նկատմամբ՝ «30.23» թիվը փոխարինել «32.13» թվով:

4)«ԱԽՈՒՐՅԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակի 3-րդ տողի գործավար՝ պաշտոնային դրույքաչափը՝ «80000» դրամ թիվը փոխարինել «85000» դրամ թվով, տոկոսաչափը համայնքի ղեկավարի աշխատավարձի նկատմամբ՝ «30.23» թիվը փոխարինել «32.13» թվով:

5)«ԱԽՈՒՐՅԱՆԻ ՖԵՐՄԱՏԱ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանի հաստիքացուցակի 2-րդ տողի գործավար՝ պաշտոնային դրույքաչափը՝ «80000» դրամ թիվը փոխարինել «85000» դրամ թվով, տոկոսաչափը համայնքի ղեկավարի աշխատավարձի նկատմամբ՝ «30.23» թիվը փոխարինել «32.13» թվով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2015 թվականի օգոստոսի 1-ից:

Ավագանու անդամներ՝	կողմ 8 (ութ)	դեմ 0 (զրո)	ձեռնպահ 0(զրո)
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գևորգյան			
Արա Մուշեղյան			
Կարեն Սերգոյան			
Սամվել Հովիկյան			
Ներսես Մաթևոսյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Միհիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ

14 հուլիսի 2015 թվական

գ. Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԱԽՈՒՐՅԱՆ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2015 թվականի N 41

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ ՀԱՄԱԼԻՐ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԻՉ ԱՐԱՄ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի դրույթով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության սան, միջազգային մրցաշարերի հաղթող Վարշամ Բորանյանի մասնակցությունը հունահռոմեական ըմբշամարտի մեծահասակների աշխարհի առաջնությանը և մարզիչի աջակցության անհրաժեշտությունը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին

ո ր ո շ ու մ է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2015թվականի բյուջեի <Սոցիալական հատուկ արտոնություններ> ծրագրի 10-րդ բաժնի, 7-րդ խմբի, 1-ին դասի 51 ծրագրի 4729 հոդվածից «Ախուրյանի համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության մարզիչ Արամ Գասպարյանին տրամադրել միանվագ դրամական աջակցություն՝ 200000 /երկու հարյուր հազար / դրամի չափով :

Ավագանու անդամներ՝	կողմ 8 (ութ)	դեմ 0 (զրո)	ձեռնպահ 0(զրո)
Արմեն Բաբուջյան			
Արտաշես Գևորգյան			
Արա Մուշեղյան			
Կարեն Սերգոյան			
Սամվել Հովիկյան			
Ներսես Մաթևոսյան			
Վանիկ Մկրտչյան			
Վահան Միհիթարյան			

ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԻԳԻԹՅԱՆ
14 հուլիսի 2015 թվական
գ. Ախուրյան